

ԽԱՋԱՏՈՒՐ ԿԱՅԱՅԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ № 7709 ՏԱՂԱՐԱՆԸ

ԳԵՎՈՐԳ ԱՐԳԱՐՅԱՆ

էրոնդ Շյուցը հայագիտությանը նվիրել է մի շարք հետազոտություններ: Հիմնականում անգլերեն և գերմաներեն հրատարակված այդ ուսումնասիրությունների գլխավոր նյութը հայ-ղփշաղերեն հարաբերություններն են: Վերջին տարիներին նրա ուշադրությունը բեռնված է Ղրիմի հայ գաղութին, որին նվիրված մի արժեքավոր հոդված լույս տեսավ վերջերս¹: Հոդվածում հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել Ղրիմի հայ-ղփշաղերենի ակունքներին: Մեզ առանձնապես կարևոր են թվում գիտնականի խորհրդածությունները կոմաներեն լեզվի և հայ-ղփշաղերենի առնչությունների կապակցությամբ: Հենվելով կոմաներենի ամենակարևոր հուշարձանի, այսպես կոչված Codex Cumanicus-ի վրա, նա առաջ է քաշում հուշարձանի ուսումնասիրության հարցը՝ հայ-ղփշաղերենի հարաբերությունները նրա հետ պարզելու առումով: Codex Cumanicus-ն ստեղծվել է 1303 թ. Սարայում, որտեղ բնակվում էին բազմաթիվ հայեր: Նրա ուսումնասիրությամբ զբաղվել են նաև անցյալում:

V—IX դդ. հին հունգարները բնակվում էին Կովկասից հյուսիս ընկած տարածություններում: Այդ ժամանակաշրջանում ստեղծված հայկական աղբյուրներում հաղորդվող տեղեկությունները (հարավային տափաստանային ժողովուրդների մասին) հավաքելը, ուսումնասիրելն ու հրատարակելը հունգարացի գիտնականի ծրագրած կարևոր գործերից են:

Հունգարիայում հրատարակության են պատրաստում «Համաշխարհային գրականության հանրագիտարանը» և «Հունգարական մեծ հանրագիտարանը», որոնցում պատշաճ տեղ է հատկացված նաև Հայաստանին և հայ գրականությանը: Է. Շյուցը հունգարացի հայագետ Պ. Սալմաշիի հետ միասին պատրաստում են հանրագիտարաններում զետեղվելիք հոդվածները: Նրանք մասնակցում են նաև Բուդապեշտում հրատարակության պատրաստվող «Հայ-հունգարական պատմական հարաբերությունները» ժողովածուն կազմելու աշխատանքներին:

Լեզվաբանության բնագավառում վերջին տարիներին տեղի ունեցած կարեւոր գյուտերից մեկը ամերիկացի գիտնականների կողմից Բելրոթում հայտնաբերված արաբերեն-պարսկերեն-թուրքերեն-միջին մոնղոլերեն-միջին հունարեն-միջին հայերեն բառացանկի (XIII—XIV դդ.) գյուտն է: Դեռևս անտիպ սույն բառարանի հայերենին վերաբերող բաժնի ուսումնասիրության և հրատարակության գործը հանձնարարված է է. Շյուցին, որը, ի միջի այլոց, տիրապետում է մի շարք հին ու նոր լեզուների: Հայտնի է, որ հայերենի պատմական հնչյունաբանության վերաբերյալ պահպանվել են մեծ մասամբ անուղ-

¹ Edmond Schütz, Arméno—Kiptschakisch und die Krim („Hungaro-turcica“ Budapest, 1976, էջ 188—205)։

զակի տեղեկություններ: Նորահայտ բազմալեզու բառարանը պարունակելով շուրջ 700 հայերեն բառեր, գալիս է իր եզակի ծառայությունը մատուցելու լեզվաբաններին:

Հայասեր գիտնականն իրեն նվիրել է նաև հայկական սկզբնաղբյուրներն օտար լեզուներով թարգմանելու գործին: Այսօր մեզ հետաքրքրողը Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի № 7709 ձեռագրում պահպանված և Վ. Հակոբյանի ձեռքով հրապարակված² հաշատուր Կաֆայեցու (հաշգուղ) տարեգրության գերմաներեն թարգմանությունն է³:

Տարեգրությունը XVII դ. Ղրիմին նվիրված ամենաարժեքավոր երկն է հայ ժամանակագրական մատենագրության մարզում: Այն շարադրված է դեպքերի ժամանակակցի և ականատեսի կողմից: Խաշգուղը ծնվել է 1592 թ. և վախճանվել 1658 (59) թ.:

Պրոֆ. Շյուլցը գերմաներեն թարգմանությանը կից առաջաբանում ուրվագծում է սկզբնաղբյուրների ուսումնասիրման ու հրատարակության համառոտ պատկերը: Յ. Համմերը դեռևս 1829 թ. հրատարակած «Օսմանական տերության պատմություն» աշխատությունում, ինչպես նաև Յ. Վ. Ցինկուզեն 1855, 1856 թթ. տպագրած «Օսմանական տիրապետությունը նվրոպայում» մենագրության մեջ մանրամասն ուսումնասիրել են օսմանական տարեգրություններում հաղորդվող տեղեկությունները ու միջնադարյան Ղրիմի վերաբերյալ: Դարձյալ Յ. Համմերը (նշվ. աշխ.) և Վ. Մ. Սմիրնովը («Крымское ханство под верховенством Османской порты до начала XVIII в.», СПб., 1887) — առատորեն օգտագործել են Ղրիմում ստեղծված տեղական աղբյուրները: Նշված մենագրությունները Ղրիմի պատմությանը վերաբերող մնայուն գործեր են, որոնք այսօր էլ օգտագործվում են որպես առաջնահերթ ուսումնասիրություններ:

Պատերազմական գործողություններին վերաբերող աղբյուրներին զուգընթաց մեծ կարևորություն ունեն նաև Ղրիմի խանության սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող սկզբնաղբյուրները: Այս առումով առաջնահերթ դերը պատկանում է հատկապես 30-ամյա պատեռարքի վերաբերող դիվանագիտական փաստաթղթերին: Հակադիր կողմիցիաներից յուրաքանչյուրը ձգտում էր իր կողմը դրավել Ղրիմին, և այդ կապակցությամբ կուտակվել է դիվանագիտական գրադրությունների մեծ պաշար, ինչպես Արևելքում, այնպես էլ Հյուսիսային նվրոպայի երկրներում: Դանիայում հրատարակության է պատրաստվում (Յ. Մատուց) համապատասխան նյութերի մի ժողովածու: Ուսումնասիրման և հրատարակման կարոտ են նաև Ռուսաստանում, Գերմանիայում, Իտալիայում և այլուր պահվող վավերագրեր:

Թվարկված նյութերի միջավայրում որոշակի նշանակություն է ստանում նաև հայ ժամանակագրի երկը: Ծավալով փոքր, բայց պատմագիտական զգալի արժեք ներկայացնող սույն ժամանակագրությունը պահպանվել է, ինչպես ասվեց, Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի № 7709 ձեռագրում: Ժամանակագրությունից բացի ձեռագիրը պարունակում է նաև բազմաթիվ

² «Մանր ժամանակագրություններ», XIII—XVIII դդ., հ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 205—236:

³ E. Schütz, Eine armenische Chronik von Kaffa aus der ersten Hälfte des 17 Jahrhunderts („Acta Orientalia Academiae Scientiarum Hungaricae“, T. XXIX, F. 2, 1975, էջ 133—186: Այսուհետև՝ Շյուլց):

տաղեր և հայագիտությանը ծանոթ է ավելի շատ որպես հազվագյուտ տաղարան: «Բուն ժողովրդական երգերի այսպիսի հարուստ փունջ ոչ մի ուրիշ ձեռագրում չկա. դա մի հազվագյուտ գանձ է, որն արժանի է ամենալուրջ ուշադրության»⁴: Տաղերը հավաքողն ու ընդօրինակողը նույն ինքը հաշգուզն է, որը 1624 թ. քահանա ձեռնագրվելուց հետո ստացել է նոր անուն՝ հաշատուր: Նրա էազմած տարեգրությունը շարադրված է հիմնականում տաղարանի վերջին թերթերի վրա:

Հազարանը կազմելու և երգերը գրի առնելու ժամանակի մասին տեղեկությունները գերմաներեն թարգմանության առաջաբանում քաղված են Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրաց ցուցակից, ինչպես նաև Ասատուր Մնացականյանի և Վարդգես Միքայելյանի աշխատություններից⁵, որոնք բարեխղճորեն նշել է թարգմանիչ գիտնականը⁶: Քանի որ այդ տեղեկությունները գերմաներեն թարգմանության միջոցով արդեն դուրս են եկել հայ բանասիրական դրականության սահմաններից՝ ավելի է մեծանում դրանց ճշգրտման անհրաժեշտությունը:

Թարգմանության առաջաբանում հայտնվում է, որ տաղերն սկսել են ընդօրինակվել այն ժամանակ, երբ հաշգուզը եղել է «16-ամյա մի պատանակ»⁷: Պրոֆ. Շյուցի աղբյուրը Աս. Մնացականյանի հետևյալ տողերն են. «Այս դրիշը (հաշգուզը—Գ. Ա.) 1608 թվականին, 16 տարեկան հասակում գրի է առել երկու տասնյակից ավելի երգեր, որոնք սովորած է եղել փոքր հասակում», նա ճհանդես է գալիս որպես հայկական ժողովրդական երգերի մեզ հասած հայտնի առաջին գրի առնողը⁸: Սրանից ելնելով՝ պրոֆ. Շյուցը գրում է. «Այս ձեռագիրը հայկական ժողովրդական երգերի առաջին եզակի ժողովածուն է»⁹:

Լյուպիսով, ըստ գոյություն ունեցող կարծիքի, հայկական ժողովրդական երգերի գրառման գործն սկսվել է առաջին անգամ XVII դ. 16-ամյա մի պատանու կողմից: Այս կարծիքն առաջացել է հաշատուր Կաթայեցու չափածո հիշատակարանի հիման վրա: Կաթայեցին գրում է.

Այս տաղեր ես տղակուտ¹⁰ ի վեր գրեցի...
Տաղեր և հայրեններ...

⁴ Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 10—11:

⁵ «Յուցակ ձեռագրաց», հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1970, էջ 591: Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 10—11: Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 316—317:

⁶ Շյուց, էջ 134—135:

⁷ Նույն տեղում, էջ 134:

⁸ Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 10—11:

Ժողովրդական երգերի կապակցությամբ է. Շյուցի վկայակոչած մյուս աշխատությունում կարդում ենք. «Գիտական լուրջ պրպտումների շնորհիվ բանասեր Աս. Մնացականյանը ցույց է տվել, որ հայկական ժողովրդական երգերի առաջին ձեռագիրը հավաքածուն կազմել է հաշգուզը... 1608 թ., ընդամենը 16 տարեկան հասակում սա գրի է առել քսանից ավելի հայկական ժողովրդական երգեր» (Վ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 316):

⁹ Շյուց, էջ 135:

¹⁰ «Տղա» բառը Կաթայեցին գործածում է նաև չափահաս երիտասարդների վերաբերյալ: Օրինակ, Երուսաղեմի նվիրակ Մարտիրոս վարդապետի մասին նա գրում է. «Տղայ գոլով մանուկ բարի, արժան լինի խորին ծերի»։ Նվիրակ վարդապետը պետք է, որ առնվազն 25 տարե-

Ումն հոգոց է պիտանի,
 Ումն մարմնոց ուրախալի:
 Թվականներ¹¹ անթիւելի:
 ՌԾԷ (1608):
 Եղեալ է յաշխարհիս բաներ զարմանալի,
 Ումն պիտանի, ումն անպիտանի...
 Հետեւեցայ հետ թրականին մինչ ի ՌԺԵ (1656)¹²:

Այստեղ հիշատակված ՌԾԷ (1608) թվականն ընկալվել է որպես տաղերը դրի առնելու թվական: Այդ թվականին խաչդուռն իսկապես 16 տարեկան էր, բայց ուշադիր ընթերցողը կնկատի, որ հիշատակարանում նշված 1608 թվականը կապ չունի ո՛չ խաչդուռի տարեթիվ, ո՛չ էլ տաղերը դրի առնելու ժամանակի հետ: ՌԾԷ թվականը զետեղված է «Թվականներ անթիւելի» բառերից հետո և վերաբերում է այն թվականներին, որոնց ընթացքում «եղեալ է յաշխարհիս բաներ զարմանալի»: խաչատուր Կաֆայեցին հիշատակարանում ներկայացրել է № 7709 ձեռագրի ընդհանուր բովանդակությունը: Նախ հիշատակել է ձեռագրում ընդօրինակված տաղերը և հայրենները, ապա՝ տարեգրություն մեջ գրանցված թվականները: «Թվականներ» ասելով նա հասկացել է ձեռագրի տարբեր էջերում իր գրանցած այն թվականները, որոնք ի մի բերելով, Վ. Հակոբյանը հրատարակել է «Մանր ժամանակագրություններում»: Թվականներից առաջինը ՌԾԷ թվականն է¹³, իսկ վերջինը՝ ՌԺԵ: Այսպիսով՝ 1608 թ. հիշատակարանում նշված է որպես տարեգրությունն սկսող թվական, այսինքն՝ որպես խաչատուր Կաֆայեցու օրոք տեղի ունեցած և տարեգրության մեջ գրանցված առաջին թվական¹⁴: Իսկ հայկական ժողովրդական երգերը Կաֆայեցու կողմից 16 տարեկան հասակում գրանցված լինելու մասին ձեռագրում չկա որևէ վկայություն:

Այդպիսի վկայության տպավորությունն ստեղծվել է հիշատակարանը հետևյալ ձևով վերծանելու հետևանքով.

Այս տաղերն են տղակուտ ի վեր գրեցի...
 Թվական էր անթիւելի
 ՌԾԷ¹⁵:

կան լինելու ինչ վերաբերում է. «տղակուտ» բառին, դրանով Կաֆայեցին նկատի է ունեցել իր 28-ամյա հասակը՝ 1620 թ., երբ նա առաջին անգամ սկսել էր ընդօրինակել տաղարանը (տե՛ս ստորև):

¹¹ Ձեռագրում կետագրության և ուղղագրության կանոնների կայուն պահպանություն չկա, բայց մեծատառով միշտ էլ սկսվում է նոր միտք: Մեծատառով է գրված նաև «Թվականներ» բառը:

¹² Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 7709, էջ 37բ:

¹³ ՌԾԷ (1608) թ. վերաբերող գրանցումը, որով հայտնվում է Ղրիմի խանի մահվան մասին, խաչատուր Կաֆայեցին կատարել է ձեռագրի 148ր էջի վրա գրված մի տաղի ստորին լուսանցքում: Գրանցումը կատարվել է ձեռագրի առաջին մասի ընդօրինակության թվականից (1620) հետո:

¹⁴ 220ա էջի ստորին լուսանցքում Կաֆայեցին ունի 1583 և 1584 թթ. վերաբերող երկու տողանոց մի գրանցում, բայց քանի որ այդ թվականներին նա դեռևս ծնված չէր՝ հիշատակարանում «Թվականներ» սկիզբը համարել է 1608 թ. (հմտ. «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 206):

¹⁵ Ա. Մ և ց ա կ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 11:

ինչպես տեսնում ենք, այստեղ «թվականներ» բառը կարգացված է «թվական էր»։ Այսպես կարդալու դեպքում ՌՄԷ թվականը իսկապես դառնում է տաղերի ընկալման թվական։ Իրականում, սակայն, ձեռագրում «թվական էր»-ի փոխարեն գրված է «թվականներ», որը, ինչպես տեսանք, վերաբերում է ժամանակագրությանը։ Հիշատակարանը ճիշտ է վերծանել Վ. Հակոբյանը, որը 1608—1656 թթ. իրավամբ համարել է «տարեգրության ընդգրկած ժամանակագրական սահմաններ»¹⁶։

Ինչ վերաբերում է տաղերը № 7709 ձեռագրում գրի առնելու իրական թվականին՝ այդ մասին հաշատուր Կաֆայեցին ինքը ձեռագրի 66ա էջում զետեղված արձակ հիշատակարանում շատ որոշակի գրում է. «Թերավարժ գրչակս՝ Լիսասարկավազ¹⁷ հաշգոռուզս¹⁸ յիշեցեք¹⁹ ի Տէր, ով, եղբայրք, որժամ հանդիպիք տաղերոյս և երգերոյս... Գրեցաւ սա ի թվականիս ՌԿԹ (1620)»։ Պարզ ասված է, որ տաղերն ու երգերն ընդօրինակված են 1620 թ., այսինքն՝ այն ժամանակ, երբ հաշգոռուզը ոչ թե 16 տարեկան պատանի էր, այլ 28-ամյա երիտասարդ։ № 7709 ձեռագրի ընդօրինակման իրական թվականները քաջ հայտնի են եղել մասնագետներին։ Դևուկա 1951 թ. Վ. Հակոբյանը ձեռագրի 66ա էջում գրված հիշատակարանի և Գրիգորի մահվան ամսիվ 1658 թ. գրված չափածո տարեգրության հիման վրա ձեռագրի ընդօրինակման ժամանակ է նշել 1620—1658 թթ.²⁰։ Ա. Մնացականյանը 1956 թ. կրկնել է նրան, գրելով. «հաշգոռուզ... № 7709 ձեռագիրն ընդօրինակել է 1620—1658 թվականներին»²¹։ Այսուհանդերձ՝ Մնացականյանի կազմած ժողովածուում № 7709 ձեռագրից քաղված երգերի տակ նշված է ոչ թե 1620, այլ 1608 թ.։ Այս անհամաձայնությունը բացատրված է այսպես. «հաշգոռուզը շնայած № 7709 ձեռագիրն ընդօրինակել է 1620—1658 թթ., բայց մեզ հետաքրքրող երգերը նա գրի է առել 1608 թ., ուստի այդ երգերի տակ... մենք նշել ենք 1608 թվականը»²²։

Արդեն ասվեց, որ 1608 թ. որպես երգերը գրի առնելու ժամանակ է ընկալվել «թվականներ» բառը «թվական էր» կարդալու հետևանքով։ Բայց եթե անգամ հաշգոռուզը երգերը առաջին անգամ գրանցած լիներ իսկապես 1608 թ. իր կազմած ինչ որ անհայտ տաղարանում, դարձյալ այդ երգերը իրականում մեզ հասել են միայն 1620 թ. ընդօրինակված № 7709 ձեռագրում, հետևաբար այս ձեռագրի կողքին պետք է նշվեր 1620 և ոչ՝ 1608 թ.։

«Թվականներ» բառը «թվական էր» կարդալու դեպքում ստացվում է այնպես, թե հիշատակարանը վերաբերում է միայն տաղերին, իսկ ձեռագրում գրանցված թվականներին (ժամանակագրության) մասին խոսք չկա։ Սրանից էլ բխում է այն տպավորությունը, թե տաղերը գրի առնելու համար Ղրիմում Կաֆայեցուն ոմանք ասել և հայհույել են. «Եղիլ են նաև իրեն այդ գործի հա-

16 «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 205։

17 Ձեռագրում՝ «Լիսասարկավազ»։

18 Ձեռագրում՝ «հաշգոռուզ»։

19 Ձեռագրում՝ «իշեցեք»։

20 «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 205—206։ Տե՛ս նաև «Էջմիածին», 1944, № 1, էջ 43։

21 Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 463։

22 Նույն տեղում։

մար առողներն և նույնիսկ հայհոյողներն»²³, Իրականում, սակայն, Կաֆայեցիներ հայհոյողներին ակնարկելով նկատի է ունեցել ժամանակագրությունը (և ոչ՝ տաղերը) չգնահատողներին, որոնք «ոչ մտիկ անեն այնպես քաներաւ և հայհոյեն դիս»։ «Այնպես բաներ» ասելով նա հասկացել է ժամանակագրության մեջ նշված դեպքերը «Եղեալ է յաշխարհիս քաներ զարմանալի»։

1620 թ. հիշատակարանը գրելուց հետո Կաֆայեցիներ շարունակել է երգեր հավաքել նաև հաջորդ տարիներին։ Դա երևում է 109ա—116ա էջերում ընդօրինակված «Ողբ հասպեկ կղերկոս է վասն Սարգսի» և այլ տաղերից։ Ողբի վերջում (115բ) հասպեկը հայտնում է, որ Սարգիսը ղոհվել է հայոց 1091 թ., այսինքն, մեր թվականության 1642 թ.։ Այս թվականին հաշատուր Կաֆայեցիներ արդեն 50 տարեկան էր։

Հասպեկի տաղից ընդամենը մեկ թերթ առաջ Կաֆայեցիներ ընդօրինակել է «Ահա տեսաք թ' ինչ կայ ծովին» տաղը, որը նույնպես տպագրված է որպես 16 տարեկան պատանու կողմից գրի առնված տաղ²⁴։ Ծիշտ է, նյութերի ընդօրինակման ժամանակագրական կարգը միշտ չէ, որ ձեռագրում համապատասխանում է թերթերի դասավորության կարգին, ուստի չենք կարող ասել, թե խնդրո առարկա տաղը նույնպես ընդօրինակված է անպայման 50 տարեկան հասակում, բայց 16 տարեկան հասակում ընդօրինակված լինելու մասին ձեռագրում չկա, կրկնում ենք, ոչ մի տեղեկություն²⁵։

Առհասարակ № 7709 ձեռագիրը չի տրամադրում հաստատ հիմք՝ պնդելու համար, թե հայկական ժողովրդական երգերը դրի է առել առաջին անգամ հաշատուր Կաֆայեցիներ, XVII դ.։ Այս ենթադրությունը հաստատ չէ ոչ միայն այն պատճառով, որ ժողովրդական երգերից մի քանիսը հանդիպում են նաև այլ ձեռագրերում (հետևաբար՝ կարող էին գրի առնված լինել ոչ անպայման Կաֆայեցու կողմից), այլև այն պատճառով, որ նույնիսկ միայն № 7709 ձեռագրում պահպանված երգերում կան ավելի վաղ ժամանակներում գրի առնված լինելու մասին վկայող տվյալներ։ Այդ երգերում առկա գրչական աղճատումները ցույց են տալիս, որ հաշատուր Կաֆայեցիներ դրանք արտագրել է վաղորդ գոյություն ունեցած ձեռագրերից։ Այսպես, օրինակ, միայն № 7709 ձեռագրում պահպանված երգերից մեկում կարդում ենք՝

Բեր ինձու ինձու բանիր,

Շէկ մոշում է աջըր է դըդալ,

Բեր ի քարտատողիս սըմա պընակ,

Բեր ինձ ընձու խօռտատողիս շորափըսած²⁶։

Մինչև օրս չվերծանված և հանելուկային տաղի տպավորություն թողած այս տան առաջին տողում մենք նկատում ենք մի վանկի պակաս, երրորդ տողում ավելի է երկու, իսկ չորրորդում՝ չորս վանկ։ Այսպիսի անկանոնություն կարող էր առաջանալ միայն տաղը գրավոր աղբյուրից արտագրելու ժամանակ։ Ինչպես երևում է, մեր ընդգծված բառերն սկզբնապես գրված են եղել ընդօրինակության համար հիմք ծառայած ձեռագրի լուսանցքներում և ար-

²³ Նույն տեղում, էջ 11։

²⁴ Նույն տեղում, էջ 304—316։

²⁵ Եթե անգամ ձեռագրի ընդօրինակությունն սկսված լիներ իսկապես 1608 թ.՝ դարձյալ դա չէր նշանակի, թե բոլոր 24 տաղերն էլ ընդօրինակված են այդ միևնույն թվականին։

²⁶ Ձեռ. № 7709, էջ 89ա։ Տե՛ս նաև Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 114։

տագրողի կողմից ներմուծվել են սխալ տեղերում: Չորրորդ տողի «բեր ինձ ընձու» բառերը հեղինակային բնագրում պատկանել են առաջին տողին և պետք է վերստին ներմուծվեն նրա մեջ, փոխարինելով սխալ արտագրված «բեր ինձու ինձու»²⁷ բառերին: Իսկ երրորդ տողի «բեր ի» արտահայտությունը կիսատ մնացած կրկնությունն է առաջին տողում գտնված «բեր ինձ» արտահայտության և որպես ավելորդություն պետք է դուրս հանվի տաղից: Նշված աղճատումները վերացնելուց հետո տաղի հեղինակային բնագիրը վերականգնվում է այսպես.

Բեր ինձ ընձու ընձու բանիր,
Շէկ մոջումէ աջըրէ դըգալ,
Քարտօտօղիս սըմա պընակ,
Խօռտօտօղիս շօրափըս ա՛ծ:

Այստեղ արդեն կարգավորված է ոտանավորի և՛ չափը, և՛ շարահյուսությունը:

12 տնից բաղկացած տաղի մյուս բոլոր 11 տներում հեղինակային տաղաչափությունը (յամբական ութ վանկանի ոտանավոր, չորս ոտքերով) պահպանված է անաղարտ ձևով: Աղճատումը կատարվել է միայն մեր բերած տնում, և դա զարմանալի չէ, որովհետև բովանդակության առումով այն ամենատանհասկանալի տունն է: Ընդօրինակողները չեն հասկացել տողերի իմաստը: «Տողերի իմաստը, — գրում է Աս. Մնացականյանը, — մասամբ աղավաղումների և մասամբ էլ իրենց պարունակած արխաիկ, շատ հին հասկացողությունների հետ կապված բառերի պատճառով, որոնք հետագայում դուրս են մնացել գործածությունից, լրիվ չի հասկացվում»²⁸: Մնացականյանը անհասկանալի հասկացողությունների շարքն է դասել հատկապես «աջըր», «քարտօտօղիս», «խօռտօտօղիս», «շօրափըսած» բառերը²⁹:

Քանի որ սույն տունը աղճատված և չվերծանված վիճակում տպագրված է նաև դպրոցական քրեստոմատիաներում և մինչև օրս դիտվում է որպես հանելուկային³⁰, առիթն օգտագործենք վերծանելու համար տան բովանդակությունը: Առաջարկվող վերծանությունը, անշուշտ, վերջնական համարվել չի կարող, քանի դեռ մեր ենթադրած բառերը որևէ աղբյուրում վկայված չեն, այդուհանդերձ, նրանք կօգնեն տաղն ավելի հասկանալի դարձնելու և իմաստավորելու գործին:

Մեր վերականգնած առաջին տողի («Բեր ինձ ընձու ընձու բանիր») իմաստն արդեն հայտնի է և նշանակում է «ինձ կենդանու կաթից ստացված

²⁷ «Ինձու ինձու» աղճատված բառերն առաջացել են այդ բառերին նախորդող «ինձ» գերանվան աղբյուրությամբ: Ինձ կենդանու անունը հայերենում հոլովվելիս ենթարկվում է հնչյունափոխության և սեռական հոլովում դառնում է ընձու: Այս ճիշտ ձևը պահպանվել է ձեռագրում սխալմամբ չորրորդ տողի մեջ հայտնված «բեր ինձ ընձու» արտահայտությունում, որի հիման վրա էլ վերականգնում ենք բնագիրը:

²⁸ Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 463:

²⁹ Նույն տեղում, էջ 653:

³⁰ «Հայ գրականության քրեստոմատիա, միջնակարգ դպրոցի ութերորդ դասարանի համար», կազմեց Ա. Շ. Մնացականյանը, Երևան, 1970, էջ 99: Այս էջում Մնացականյանը գրում է. «Այս տան բառերը մեծ մասամբ հանելուկային, հին-առեղծվածային, մասամբ էլ աղավաղված բառեր են»:

պահիր... Տղան աղջկանից պահանջում է ինձու (պետք է լինի «ընձու» — Գ. Ա.) բանիր»³¹։ Դա անիրականալի պահանջ է, և աղջիկը դիտմամբ է տղայի հետ այսպիսի պայման կապում, որպեսզի տղան կամ առհասարակ չկարողանա պայմանը կատարել, կամ էլ միայն դժվարությունների գնով տիրանա աղջկան։ Երկրորդ տողի «շէկ մոջումէ աջըրէ դգալ» բառերը նշանակում են շէկ մրջյունի ողից³² պատրաստված գդալ։ Սա նույնպես անիրականալի պահանջ է, որովհետև նախ՝ շէկ մրջյունն ինքն է հազվագյուտ³³ և երկրորդ՝ մրջյունը ող չունի և նրանից գդալ պատրաստել հնարավոր չէ։

Երրորդ տողի «քարտուտոզ»-ը ամենայն հավանականությամբ «քարթոթոշ» բառն է, որը գրվում է նաև «քարաթոթոշ», «քարթաթոշ», «քարաթոշ», «քարթալոշ», «քարթոշ» ձևերով³⁴։ Տաղի նախնական բնագրում էլ է հավանաբար «քարտուտոշ», որը սխալմամբ ընդօրինակվել է «քարտուտոզ»։ Հնարավոր է նաև, որ ղրիմահայերը «քարթոթոշ»-ի փոխարեն գործածած լինեն հենց «քարտուտոզ» ձևը։ Բարբառներում այդ բառը նշանակում է խխունջ (նաև՝ մողես)։ Ուրեմն աղջիկը տղայից պահանջել է բերել խխունջի պատյանից պատրաստված պնակ, որը նույնպես իրագործելի չէ։

Չորրորդ և վերջին տողի իմաստը կարող ենք վերծանել ավելի պակաս հավանականությամբ, որովհետև սա ամենաշատ աղճատված տողն է։ Քանի որ նախորդ երկու տողերում խոսվում է կենդանիների մասին՝ բնական է, որ «խոտուտոզ» բառը նույնպես պետք է նշանակի ինչ որ կենդանու անուն, որը գործածվել է մեղ անծանոթ բարբառներում։ Հնարավոր է նաև, որ այդ բառն սկզբնապես դրված լիներ «խառտուտոզ» ձևով և № 7709 ձեռագրում դարձած «խոտուտոզ», որով կոչվել է տգեղ տեսք ու կոխն ունեցող գիշերային մի վայրի թռչուն, հունարեն՝ խարատրիոս (քարադր)։ Սա ունեւ բարձր ու բարակ սրունքներ, որոնցից շերեփ պատրաստել հնարավոր չէր։

Շերեփ բառը որոշ բարբառներում հանդիպում է «շոռփո» (շորփել, պոկել) ձևով³⁵։ Սրա հիման վրա մենք քննարկվող տան չորրորդ տողում հանդիպող «շորափրսած» աղճատված բառը վերծանում ենք որպես երկու առանձին բառեր՝ «շորափրս» (իմ շերեփը) և «ած» (բ՛՛ր)։ Հստ այսպիսի աղջիկը տղայից պահանջում է ոչ միայն շէկ մրջյունի ողերից գդալ և խխունջի պատյանից պնակ, այլև խոտուտոզի³⁶ սրունքներից պատրաստված շերեփ։ Սա նույնպես անիրականալի պահանջ է։

Գրչական աղճատումների օրինակներ կարելի է բերել № 7709 ձեռագրում ընդօրինակված նաև այլ երգերից։ Այսպես, օրինակ, «Ասիս-Մասիս» լեռնէն ի վար» տողով սկսվող երգի երրորդ տողը հեղինակային բնագրում եղել է

31 Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 653։

32 «աջըրէ» բառը բացառական հոլովն է «աջար» կամ «աճառ» բարբառային բառի, որ նշանակում է «ող»։ Հմմտ. Ա. Ս ու թ ի ա ս յ ա ն, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 28։

33 Տաղն ստեղծվել է այնպիսի մի միջավայրում, որտեղ ծանոթ է եղել միայն սև մրջյունը։ Այդպիսի մի միջավայրի ծնունդ է նաև ներսես Շնորհալու հանելուկների շարքում հանդիպող՝ մրջյունին նվիրված հանելուկը, որտեղ կարգում ենք. «Գունովն սեալ գէդ ըղներկոց»։

34 Ա. Ս ու թ ի ա ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 668—669։

35 Նույն տեղում, էջ 669։ Այստեղ քարկտիկա բառի դիմաց Թվարկված են խաղի 51 տարբեր բարբառային անուններ, որոնց Թվում՝ նաև «շոռփո», «շերեփո»։

36 Հնարավոր է նաև, որ «խոտուտոզ» բառը բաղկացած լինի «խոռ» (ծակ, դատարկ) և «տոտոզ» (սրածայր, ծայր) բառերից, որոնք նույնպես շերեփին չեն համապատասխանում։

այսպես՝ «գալ, գալ գազան դան իմացեր» («գալլ, գալլ գազանն այն իմացել»), իսկ № 7709 ձեռագրում ընդօրինակված է «գալ, գալ, գալ ազան դան իմացեր»³⁷։ «Թագաւոր իմ ոսկի» տաղի 13-րդ տողը հեղինակային օրինակում եղել է. «Ա՛յ, բերել, խրկագվին», իսկ № 7709 ձեռագրում գրելը «խրկագվին»-ը չի հասկացել³⁸ և դարձրել է «խրկաթ»։ «Ա՛յ, բերել, խրկաթին»³⁹։

Բերված և չբերված մի շարք այլ օրինակներ կասկած չեն թողնում այն մասին, որ հաշվառվող ժողովրդական երգերն ընդօրինակել է գրավոր աղբյուրից, ուստի այդ երգերը առաջին անգամ գրի առնելու ժամանակը պետք է համարել ոչ թե XVII դ. (1608 թ.), այլ ավելի վաղ ժամանակներ։

№ 7709 ձեռագրում գտնվող ժողովրդական երգերից շատերը դեռևս կարող են ճշգրիտ վերծանման, բայց դա առանձին հարց է։ Իսկ այժմ անցնենք ձեռագրի վերջին էջերում ընդօրինակված տարեգրության գերմաներեն թարգմանության մանրամասներին։

Տարեգրությունը շարադրված է XVII դ. Կաֆայի հայերի խոսակցական լեզվով և առատ է բարբառային տարրերով, ինչպես նաև թուրք-թաթարական և այլ օտար բառերով։ Սրանք զգալիորեն դժվարացրել են թարգմանության գործը։

Ժամանակագրության հրատարակիչ Վ. Հակոբյանը արդեն իսկ մեծ ջանքեր է թափել բնագիրը վերծանելու և բարբառային բառերը բացատրելու ուղղությամբ, բայց թարգմանչի աշխատանքը կապված է եղել այնպիսի բարդությունների հետ, որոնք պահանջել են լրացուցիչ աշխատանք։ Այդ աշխատանքն ավելի է բարդացել հաջատուր Կաֆայիցուն հատուկ խոսելաճի հետևանքով։ Խաչատուրը տարօրինակ գրելաձև ունի։ Նա բառերի մեջ գտնվող այս կամ այն տառի փոխարեն երբեմն գրում է բոլորովին չսպասվող տառեր (օրինակ՝ 213-րդ էջում «տներ» գրելու փոխարեն երկու անգամ գրել է «տներ»), ազդվելով այդ բառին հաջորդող «տապալեցին» և «բլոյց» բառերի մեջ գտնվող «լ» տառից), կիրառում է անսովոր ուղղագրություն, մոռանում է դրել բառի բոլոր տառերը, ավելորդ կերպով կրկնում է արդեն ասված որևէ բառ և այլն։ Այսպես, օրինակ, նա գրում է. «Խանդամորն փախաւ եկամ (փոխանակ գրելու ձեզաւ—Գ. Ա.), Կաֆան մտաւ» (214) կամ՝ «Խաչքէրե խանն մեռամ (փոխանակ գրելու ձեզաւ—Գ. Ա.) Խաչքէրմանին մէջն» (228) և այլն։

Այսպիսի մի խոսելաձև հանդիպում է նաև հետևյալ նախադասությունում. «ՌՆԲ (1623) թվականին Աննա խաթունս ծնամ (փոխանակ «ծնաւ»—Գ. Ա.), սեկտենբերի թ (9) փոխեցաւ առ Աստուած»։ Այստեղ «ծնամ» բառաձևը ոչ միայն տարօրինակ է, այլև ավելորդ։ Այն պարզապես մեքենայաբար կրկնությունն է նախորդ նախադասություններում գտնվող «ծնաւ» բառի («ծնաւ որդին իմ հուրկուպել», «ծնաւ դուստր իմ էտրմելիք»)։ Հայերեն բնագրի հրատարակիչը կարող էր և բառը նույնությամբ տպագրել (նա այդպես էլ վարվել է) և դրանով իր գործն ավարտել, իսկ թարգմանչից պահանջվել է նաև բառը թարգմանել և պարզել, թե ով էր Աննա խաթունը։

37 Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 115։

38 Հավանաբար «խրկագի» (եղնիկ) բառն է, որը բաղկացած է «խրիկ» (հոիկ) և «ագի» բառերից։

39 Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 124։

հաշատուր Կաֆայեցու կենսագրությունը պարզելու գործում անհրաժեշտ այս հարցին պատասխանելու համար պրոֆ. Շյուցը քիչ չի շարձարվել: Նա բառի ավելորդ լինելու մասին շմտածելով՝ նախադասությունը թարգմանել է այսպես՝ «1623 թ. իմ կին Աննա խաթունը սեպտեմբերի 9-ին հղի վիճակում վախճանվեց»⁴⁰: «Մնամ» բառի տակ թաքնված իմաստի («հղի վիճակում») ավելի հավանական կռահում պատկերացնել, թվում է, հնարավոր չէր, եթե չենք կամենում ընդունել, որ այդ բառն առհասարակ ավելորդ է:

հաշատուր Կաֆայեցու տարեգրության առաջին ուսումնասիրողները կարծի են, թե Աննա խաթունը Կաֆայեցու կրտսեր դուստրն է. «հաշատուր Կաֆայեցին ունեցել է երեք զավակ՝ հուլիսյանը (տղան), էտրոմելիքը (մեծ աղջիկը) և Աննան (փոքր աղջիկը)»⁴¹: Իրականում, սակայն, ինչպես պրոֆ. Շյուցն է կռահել, Աննա խաթունը հաշատուր Կաֆայեցու կինն է: Այս կռահումը հաստատվում է հաշատուրի որդի հուլիսյանի թողած մի հիշատակարանով, որտեղ կարդում ենք. «Յիշեսցիք ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, զստացալո սորա զպարոն հուլիսյան և զհայրն իւր զհաշատուրն և զմայրն յուր՝ Աննա խաթունն»⁴²: Ինչպես տեսնում ենք, հաշատուրի որդի հուլիսյանն իր մորն անվանում է Աննա խաթուն: Սույն վկայությանը ծանոթ լինելով հանգիստ է. Շյուցը հայերեն բնագիրը ճիշտ է վերծանել: Իսկ սա իր հերթին նշանակում է, որ հաշատուր Կաֆայեցու ժամանակագրության գերմաներեն թարգմանությունը չի կարելի դիտել որպես սոսկ թարգմանություն: Նրանում զգալի աշխատանք է կատարված նաև հայերեն բնագրում չվերծանված որոշ բառերի և առհասարակ թարգմանության միջոցով ժամանակագրության բովանդակությունը մեկնաբանելու և ավելի հասկանալի դարձնելու ուղղությամբ:

Հայերեն բնագրում անվերծանելի համարված բառերի շարքում է գտնվում նաև «ըսպենն» բառը (էջ 216, 225), որի մասին ժամանակագրության հրատարակիչ Վ. Հակոբյանը գրում է. «Թե ինչ է ըսպենն բառը, մեզ մնաց անհասկանալի»⁴³: Բառի վերծանությունը կարևոր է պարզելու համար Ղրիմի խանության տնտեսական կյանքին վերաբերող այն փաստը, թե ինչու Կաֆայի փաշաները ըսպենն առնելով՝ հաճախակի դժգոհեցրել են ժողովրդին և թե ինչու հայ ժամանակագիրը վրդովված է խոսում «ըսպենն» մասին: Գերմաներեն թարգմանության համաձայն (էջ 149, 158) «ըսպենն» հարկի մի տեսակ է:

Կաֆայեցին գործածում է նաև այնպիսի բարբառային բառեր, որոնց բացատրությունը ժամանակագրության հրատարակիչը ծանոթագրությունների բաժնում շարադրել է սոսկ ենթադրաբար, և որոնք գերմաներեն թարգմանության մեջ վերծանված են այլ ձևով: Այսպես, օրինակ, Կաֆայեցին Հակոբ վարդապետին կոչում է «անառակ և շատակեր ջրախումն և շույլն շափրոստաշակեր» (էջ 226): Ընդգծված բառի մեջ հրատարակիչը ենթադրել է «շափոստ» (ճարմանդ) բառը և ծանոթագրել. «ըստ երևույթին ուզում է ասել՝ շատ ուտելուց հագուստի կոճակները բաց անող» (էջ 235): Թարգմանիչ գիտնական-

⁴⁰ Շյուց, էջ 139:

⁴¹ Ա. Արահամյան, հաշատուր երեք Կաֆայեցու տարեգրությունը («էջմիածին», 1944, № 1, էջ 41):

⁴² Նույն տեղում:

⁴³ «Մանր ժամանակագրություններ», 4. I, էջ 232:

նին սույն բացատրությունը չի համոզել և նա բառի մեջ ենթադրելով հավանաբար «շափս» և «աշակերտ» բառերը՝ թարգմանել է այսպես. «ein nachlassiger Schuler» (էջ 160), այսինքն՝ «անփուլթ աշակերտ»։ Սա նույնպես ենթադրական բացատրություն է, բայց մեզ ավելի հավանական է թվում, որովհետև հայերեն բնագրում բառին հաջորդող հետևյալ միտքը նման ենթադրության համար հիմք տալիս է. «նա (Հակոբ վարդապետը—Գ. Ա.) կուկանկնէր ի դիմացն և ասեր ոտանավոր խենթումենթ»։ Իսկ «հագուստի կոճակները բաց անող» բացատրությունը սակավ համոզիչ է, որովհետև Կաֆայեցին Հակոբ վարդապետի մասին մեկ անգամ արդեն շատակեր բառը գործածելուց հետո (աշատակեր ջրախումն և շռայլն) հազիվ թե գործածեր դարձյալ միևնույն բովանդակությունն արտահայտող մեկ այլ բառ, որն ավելորդ կրկնություն կլիներ։

Կաֆայեցին հայտնում է, որ թուրքական սուլթանն ավերել էր բազում քաղաքներ, «բազում մարդիք, այրք և կանայք, մանտր տղայք գերի արել էր և բազում գիրգ նոցա գերի վարել էր» (էջ 210)։ «Գիրգ» բառի ճշգրիտ իմաստը հայերեն հրատարակչին պարզ չի եղել և նա հարցնում է. «ի՞նչ է նշանակում գիրգ բառը՝ գիրք թե գիրկ, գուցե վերջինիս իմաստով, այսինքն՝ գրկի երեխա» (էջ 231)։ Սույն բացատրության համաձայն էլ գերմաներեն թարգմանության մեջ դրված է. «ծծկեր երեխաներ (կամ գրքեր)» (էջ 141)։ Ավելի ուշագիր ղննելիս, սակայն, նկատվում է, որ խոսքը ոչ թե գրկի երեխաների, այլ գրքերի մասին է։ Ինչպես տեսանք, Կաֆայեցին գրում է. «այրք և կանայք, մանտր տղայք գերի արեալ էր»։ «Մանտր տղայքը» արդեն երեխաներն են։ Իսկ ծծկեր երեխաների մասին հազիվ թե ասվեր «գերի վարել էր»։ Բացի դրանից «գիրգ» բառը «և» շաղկապով բաժանված է մարդկանց վերաբերող բառերից («և բազում գիրգ նոցա») և դրանով ցույց է տալիս, որ վերաբերում է ոչ թե մարդկանց, այլ նրանց ունեցած գրքերին։ Իսկ որ Կաֆայեցին գրքերի մասին կարող էր գործածել «գերի վարել» բառերը՝ դա երևում է մեկ այլ էջում (215) գործածված հետևյալ արտահայտությունից. «գիրք և աւետարանք գերի տարին»։

Մանր տուրքերի մասին խոսելիս Կաֆայեցին պատմում է, թե ինչպես կաֆայցիներից յուրաքանչյուրից պահանջվել է երեք ոսկի, «Քրիստոնեայք լացին ողբացին, թե ճար չունինք տալու» (էջ 221)։ Վերջապես մի քրիստոնյա տաթ գնում է մեծամեծների մոտ և հրաման (էմր) է բերում, որ տուրքը մեկ ոսկով պակասի. «մէկ բարեպաշտ տաթ քրիստոնեամն էմր եկաւ, թէ Բ (2) ոսկի թող առնուն» (էջ 221)։ Ընդգծված «տաթ» բառը հայերեն հրատարակչին ավելորդ համարելով՝ դուրս է գցել. «Բառը խանգարում է բնագրի միտքը՝ հասկանալուն, ուստի բնագրից հանեցինք» (էջ 233)։ Իսկ գերմաներեն թարգմանության մեջ «տաթ»-ը համարվել է «դատաւոր» բառի առաջին երեք տառերը և բառը մտովին լրացվել է այսպես. «տաթ[աւոր]» գերմաներեն՝ «Richter» (էջ 154)։ Մեր կարծիքով, սակայն, ճիշտ չեն և՛ հայերեն բնագրի հրատարակողը, և՛ գերմաներեն թարգմանության հեղինակը։ Նախ՝ բառը դուրս գցելը բնագրի հրատարակության լավագույն ձևը չէ և երկրորդ՝ դատավորն ի՞նքն էր հրաման կայացնում (քննարկվող բառից 4 տող վերև կարգում ենք. «ան անիծածն էր դատաւոր, էմր շարաւ») և ոչ թե հրաման բերող միջնորդ էր։ Բացի դրանից՝ «տաթ» և «դատաւոր» բառերի մեջ նմանություն չկա։ Մեզ թվում է, բառը պետք էր պահպանել նույնությամբ և՛ հրատարակել։

Հայերեն բնագրի մեջ, թեկուզև՝ նրա իմաստը անհասկանալի մնար, ժամանակագրության մեջ մի քանի անգամ հանդիպում է «տաթի տուն» արտահայտությունը («Տաթին տանն պաղչաներն աւերեցին» (էջ 211), «Տաթին տանն բաղում աւերք արին» (էջ 215): Ինչպես երևում է, «տաթ» բառը կապ ունի այդ տեղանվան հետ (հմմտ. Շյուց, էջ 166), եթե, իհարկե, այդ տեղանվանը «քրիստոնեամն» բառը համապատասխանում է:

Ձեռագրում հանդիպում է նաև «չերանցաւ» բառը, որը հրատարակիչը սրբագրել է «չերմացաւ»⁴⁴ ձևով (էջ 216): Այս միջամտությունը նույնպես տեղին չէ, որովհետև գրաբարում գոյություն ունի նաև «չերանել» բառը, որը խաչատուր Կաֆայեցու բառապաշարում ունի «խիստ տաքանալ» իմաստը:

Տպագիր բնագրում կան նաև տպագրական այնպիսի վրիպակներ, որոնք բարբառային բառերի տպավորություն են ստեղծում և թարգմանչի կողմից կարող էին դիտվել որպես անվերծանելի բառեր: Օրինակ, «խոտ չիքարաւ լոնէ» (էջ 220), «գէնգէշարին» (էջ 222): Այսուհանդերձ՝ թարգմանիչը սրանք ճիշտ է վերծանել և թարգմանել է «խոտ չիքար ամբռնէ» («ամառվանից սկսած խոտ չկար», էջ 153, 171) և «գէնգէշ արին» («խոտհուրդ արեցին», էջ 155) իմաստներով:

Գերմաներեն թարգմանությունը ունի նաև այլ առավելություններ: Այսպես, օրինակ, ձեռագրի մաշված լինելու հետևանքով որոշ բառեր ջնջված են. «դո և թագն աշխարհի»: Կիսատ մնացած «գո» բառը գերմաներեն թարգմանության մեջ լրացված է «գոհարն» (էջ 162), որը ճիշտ է: Թարգմանության առավելություններից է նաև 1657 և 1658 թթ. դիմաց գրանցված տարեգրությունների չափածո թարգմանությունը (էջ 162): Հայերեն բնագրում դրանք հրատարակված են արձակ (էջ 228), այնինչ՝ Կաֆայեցին այդ հատվածները շարադրել է իսկապես չափածո: Միայն՝ թարգմանիչը չի նկատել, որ իր թարգմանածին հաջորդող որոշ տողեր նույնպես չափածո են: Ինչպես թարգմանիչը, այնպես էլ հայերեն բնագրի հրատարակիչը չեն նկատել նաև այլ էջերում գտնվող հատուկներ չափածո տարեգրություններ: Օրինակ, «Պատօին նոքա որ պատծեցան, սուրբ իւրեանց զիւրեանք սպան» (էջ 211), «այսօր զրաւն եղև, շարն շարութեամբ կորեաւ» (էջ 222), «աւնիծեալն աւնիծեալ լիցի, քաղաքս այս կրկին նորոգեսցի» (էջ 208): Ձեռագրում գտնվող և մեր կողմից ընդգծված բառերը դուրս են մնացել տպագրությունից, որի հետևանքով էլ նրանց հաջորդող բառերի չափածո լինելը չի նկատվել:

Գերմաներեն թարգմանությունը ջահում է նաև փակագծերի մեջ ավելացված հայերեն բնագրի բառերի տառադարձություններով: Այսպես, օրինակ, հայերեն բնագրում «պարսիկներ» ասելու փոխարեն գրված է «կարմիր գլուխք», «կոզակների» փոխարեն՝ «ռուսք», «Ջանիբեկ Կերեյ»-ի փոխարեն «Ջանբեկէրե», «Աղովի» փոխարեն «Աղախ» և այլն: Թարգմանիչն այս բոլոր բառերը գերմաներեն տառադարձությամբ պահպանել է փակագծերի մեջ և փակագծերից դուրս տվել է նրանց գերմաներեն թարգմանությունը:

Անշուշտ սոսկ պատահական վրիպակների շարքը պետք է դասել թարգմանության մեջ տեղ գտած հետևյալ վրիպումը. «Ստամբուլում Դարդանելը մինչև 18 մղոն սառեց» (էջ 141): Հայերեն բնագրում կարդում ենք. «Ըստամբուլաւ պաղողն սառեցաւ ԺԸ (18) մղոն տեղ» (էջ 210): Վ. Հակոբյանը հատուկ ծա-

⁴⁴ Տպագրված է «չերմանցաւ»:

նոթագրությամբ հայտնում է, որ «պաղող»-ի փոխարեն պետք է լինի պողազ (բողազ, նեղուց) և որ «Ստամբուլա պողազ» ասելով Կաֆայեցին նկատի է ունեցել Բոսֆորը: Այնպես որ իսկապե՛ս միայն պատահական վրիպակի հետևանքով է, որ գերմաներեն թարգմանության մեջ Բոսֆորի փոխարեն գրված է «Դարդանել»:

Թերևս ավելի ճիշտ կլիներ «կոլշտ» (կուշտ) բարբառային բառը (էջ 220) գերմաներեն թարգմանել «կող» և ոչ՝ «մարմին», ինչպես որ թարգմանված է 154-րդ էջում: Կարելի էր նաև ավելի ճշգրիտ ներկայացնել հետևյալ նախադասությունը. «Ի՞նչ (22) մարտի... քաղաքն լցուաւ, աստուած առաքեաց և պատրաստեաց ժողովուրդ՝ անկերակուր, անգուման, որ ակն ու գուման չունէլաք» (էջ 223): Ընդգծված բառերի դիմաց գերմաներեն թարգմանության մեջ փակագծերում կարգում ենք. «Որպես բառախաղ անթարգմանելի է» (էջ 157): Ինչքան էլ որ այս բացատրությունը ճիշտ է, և ինչքան էլ որ բնագրին հաջորդող ծանոթագրությունների բաժնում (էջ 174) «ակն[կալութիւն] և «գուման» բառերը բացատրված են («սպասելիք». «հույս»), մեզ թվում է, կարելի էր բառախաղի իմաստը թարգմանել հենց նախադասության մեջ:

Հատկապես բարձր պետք է գնահատել բնագրի թարգմանությանը կից ծանոթագրությունների բաժինը: Այստեղ սպառնիչ բացատրություններ են տրված ժամանակագրության մեջ հիշատակվող բազմաթիվ անձնանունների, տեղանունների, օտար բառերի, այլևայլ տեղեկությունների մասին: Գրեթե ոչինչ անբացատրելի չի մնացել: Ծանոթագրությունները տրված են հայ և օտար համապատասխան աղբյուրների քաջ իմացության հիման վրա: Այսպես, օրինակ, «Կորեւ» տեղանվան բացատրությանը նվիրված է ավելի քան մեկ էջ ծանոթագրություն, վկայակոչված են բազմալեզու աղբյուրներ, ստուգաբանված է բառը, ներկայացված են նրա կիրառության և իմաստի տարբեր փուլերը:

Վերո ասվեց, որ Կաֆայեցու գործածած «գիրք» բառի վերծանությունը դժվար է (գիրք, թե՞ գրկի երեխա): Մենք պաշտպանեցինք «գիրք» իմաստը: Նույն կարծիքին է նաև է. Շյուցը, որը բառին նվիրած հատուկ ծանոթագրության մեջ, ի միջի այլոց, գրում է. «Թաթարներն անշուշտ գիտեին, թե որքան բարձր են հայերը գնահատում գրքերը, այդ իսկ պատճառով էլ նրանք ամենուրեք թափանում էին նաև գրքերը, որպեսզի հայերը հետագայում դրանք ետ գնելու համար մեծ փրկավճար տային» (էջ 165): Այս ծանոթագրությունը մենք վկայակոչեցինք ցույց տալու համար պրոֆ. Շյուցի ոչ միայն հայ անցյալի մանրամասնություններին ծանոթ լինելը, այլև վերաբերմունքն այդ անցյալի նկատմամբ:

Էդմոնդ Շյուցի աշխատությունը մենք համարում ենք օրինակելի:

НЕМЕЦКИЙ ПЕРЕВОД ХРОНИКИ ХАЧАТУРА КАФАЕЦИ И ПЕСЕННИК № 7709 МАТЕНАДАРАНА

ГЕВОРК АБГАРЯН

Резюме

Сохранившаяся в рукописи № 7709 Матенадарана им. Месропа Маштоца хроника Хачатура (Хачгруз) Кафаеци (1592—1659) является ценным первоисточником для истории Крыма первой половины

XV в. Венгерский ученый Эдмонд Шюц перевел в 1975 г. хронику на немецкий язык и опубликовал её в „Acta Orientalia Academiae Scientiarum Hungaricae“ (1975, т. XXIX (2), pp. 133--186).

Хроника изложена на сложном диалекте крымских армян XVII в. и изобилует непонятными словами и выражениями. Ученому удалось расшифровать и дать правильный перевод ряда неясных мест. Правильность некоторых его толкований подтверждается представленными нами новыми фактами.

Попутно мы обратились также к другим текстам данного рукописного сборника, имеющим, как и текст хроники, искажения. В частности, в тексте средневековой армянской песни «Купи, удалец!» обнаружено несколько искажений, дающих основание предположить, что песня записана впервые не в 1608 г. и не автором хроники, а другим, более ранним собирателем народных песен. Таким образом, выясняется, что первые записи средневековых армянских народных песен были сделаны не в начале XVII в., как это принято считать, а раньше.